

658  
S-38

1909

1909



01 OCT 2010

1.78(91.519)


Հ. Տէ՛ր-Գրիգորեանց

Հայոց հայոց թ. I 24  
ԱՆՀՐԱԺԵՑ

# ԶԵՐՆԱՐԿՈՒԹԻՒՆ

ԵՐԵՒԱՆ ԺԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ

Արտատպած „Էրևանskia Объявлениa“ թեր-  
թիկից 1909 թւի (№№ 24—29, 42 և 43):



ԵՐԵՒԱՆ  
Յպարան կ. Տէ՛ր-Գրիգորեանցի  
1909 թ.

658

S-38

300

1634



ԱՆԳՐԱՔԵՐԸ

# ՁԵՌԱԱՐԿՈՒԹԻՒՆ

300

1640-55

ԵՐԵՎԱՆ ԺԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ

Արտափառ Թէրութիւն Արևանքի Առաջարկաց 1909 թւ (№№ 24, 25, 26, 27, 28 և 29).



ԵՐԵՎԱՆ

Տպարան Ե. ՏԵՐ-ԳՐԻԳՈՐՅԱՆՑ

1909 թ.

14.08.2013

25.495

16366

# ԱՐԴՅՈՒՆԱՎՈՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ



687-2005

ԵՐԻՎԱՆ, ՏԵՐԵ-ԳՐԱԳՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԴՐԱՁԵՅԾ ԶԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆ

1.

Քոլոր լուսաւորւած երկիրներում, ամեն քաղաք, մինչև անգամ և շատ գիւղեր, աշխատում են իրենց ապրեկան եկամուտներն աւելացնել, իրենց գրութիւնը ապահովեցնել, բաղաքը կամ գիւղը բարեկարսդ վիճակի մէջ դնել, իրենց բնակիչներին ամեն տեսակ յարմարութիւններ տալ, աժանացնել նրանց կեանքի պայմաններն ու պահանջները, կարելոյն շափ թեթևացնել նրանց ապրուստը, լաւացնել նրանց բարեկեցութիւնը:

Չինում են ջրանցքներ, կօյուղիներ, տրամվայներ, աէլէֆօններ. Փողոցները շինում են լեռ քարերով, խճերով, ասֆալտով և մինչև իսկ տախտակամածներով. լուսաւորում են, տաքացնում են բնակարանները, ութօն, ինչպէս եփում են կերակրները, հեշտաեռը՝ էլէքտրականութիւնով, գազով. նոյն էլէքտրականութիւնով գործող ոյժ են ստեղծում և ամեն տեսակ մեքենաներ բանեցնում զանազան արհեստանոցներում. Ջրում են նրանով շոր, անապատ զաշտեր, անջրդի բարձունքներ, տափարակներ...

Այսպիսի նպատակների համար բաղաք-ներն ու գիւղերը դիմում են ոչ թէ զանազան հարկերի ու

տուրքերի և ծանրացնում բնակչութեանց առանց այն էլ  
ոչ թեթի վիճակը, այլ նրանք ստեղծում են այդ ամենը  
իրենց, վարչութեանց, խելացի, ևանդուն նախաձեռնու-  
թեամբ և ժրաշան աշխատութեամբ. իսկ զրամական սուզ  
միջոցների պատճառով դիմում են անհրաժեշտ փոխառու-  
թեան կամ հրամանում են զանազան ձեռնարկութիւններ  
ստանձնող անձանց և ընկերութիւնների, որոց արտօնու-  
թիւններ տալով նրանց:

Ինչ ասել կուզէ վարչութեանց ամենաչափան ձգտու-  
մը լինում է նախ՝ բնակչութեանց և ապա միայն՝ քաղա-  
րի կամ գիրդի օգուտները:

Կան շատ քաղաքներ, թէ եւրոպայում և թէ Ամերի-  
կայում, սրբնք իրենց բարեկարգութեան պլաստը գործոն-  
ները—էլէքտրական ոյժը, խնելու ջուրը մեծ ամեծ ժամ-  
բերի առաջ շկանգներով (թէ միանւագ և թէ տարեկան),  
ստանում են հեռուց, շատ հեռուց, նոյն իսկ հարիւրաւոր  
վերտեր ունեցող տարածութիւններից:

Բացի այդ, օրինակ՝ ջաւրը ստանալու համար նրանք  
դիմում են տարեկան ահազին ծախքերի, զանազան շար-  
ժից մեքենաների զործակցութեանց, ինչպէս և ֆիլտրա-  
ցիայի. Կոյուղիներից (եաթալիզացիա) ապականութիւնները  
դուրս մղելու համար գիմում են ոչ պակաս ծախքերի ու  
մեքենաների, որոնք համում են տարեկան հոկտյական  
գործարների,—ոչ միայն տասնեակ հազարների, այլ և հա-  
րվարաւոր հազարների, միլիոնների...

Եւ այնպիսի հիմքերի վրայ են զնում իրենց ձեռնար-  
կութիւնը, որ հաոցնում են ամեն ինչ մինիմում արժողու-  
թեան, ուստի և ճնաբաւորութիւն են ստանում օգտելու  
նաև ամենաշափաւոր կարսութեանց աէք մարդիկ:

Եթէ, քերենք այստեղ օրինակներ թէկուզ մեր Ռու-  
սաստանի քաղաքներից, մեզ հեռու կտանէր: Մեր թէրթի-

կի սուլ էջերը ստիպում են մեզ բաւականանալ և տռանց  
օրինակների:

Բայց այդպէս չէ մեր երկանը:

Թնութիւնը շոայել է մեր քաղաքին ամեն տեսակ  
յարմարութիւններով, որոնցից միայն պէտք է օգտուենիք  
մենք:

„Земля наша велика и обильна, но порядковъ въ  
ней неѣтъ“.

Այս ունենք ամեն յարմարութիւններ, բայց չանենք  
խելացի նախաձեռնողներ և զործազրողներ:

Ճինում ենք ջրանցը: Մի անգամ շինեցինք և այլ  
ևս ոչ մի ծախր:

Ճինում ենք կոյուղին: Մի անգամ շինեցինք և այլ  
ևս ոչ մի ծախր:

Ճինում ենք էլէքտրական կայարանը: Մի անգամ շի-  
նեցինք և այլ ևս ոչ մի ծախր:

Ճինում ենք էլէքտրական տրամվայը: Մի անգամ շի-  
նեցինք և այլ ևս ոչ մի ծախր:

Բացի, ի հարկէ, այն անհրաժեշտ տարեկան ծախքե-  
րից, սրբնք պիտի լինեն անշուշտ ամեն մի ձեռնարկու-  
թեան կարենը կարկատանքների (ուսուհակա) և վարչական  
պաշտօնեանների ու ծառայողների համար:

Այն ինչ մի անգամ ծախսելով մի սրոշ գումար այս  
կամ այն յիշածս ձեռնարկութեան վրայ՝ յաւիտեանս յաւի-  
տեանից պահանջ չի լինի, ոչ ֆիլտրացիայի, ոչ ներս ու  
դուրս մղող ոյժերի ու մեքենաների, ոչ էլէքտրական  
էնէրգիա ստանալու համար բազմածախր յարմարութիւն-  
ների, որոնք կլանում են ամենուրէք սկզբնական և թէ  
տարեկան ահազին ծախքեր, որոնք թանգացնում, ծանրա-  
ցնում են նրանց կարիքը և գժաւարացնում նրանց հասարա-  
կութեան բոլոր խաւերի համար գործադրութիւնը:

Կայ արդեօք մի եղկիք, մի քաղաք, որ ունենայ այն  
մեծ առաւելութիւնները, ինչ ունի մեր Երեանը:

II.

Ժամանակ է արգէն և անշուշտ հասել է այդ ժամա-  
նակը, որ մեր քաղաքը, մեր Դուման, մեր քաղաքավուխը  
ժամանեն մեր քաղաքին այնպիսի պայմանների մէջ զնել,  
որ օրի վրայ բարգաւաճի, կենդանանայ, շրեղանայ և  
նոյն իսկ Երոպական ու Ամերիկական քաղաքների շաբքն  
ընկնի իր ջրանցքով, իր կոյուղիով, իր Էլէքտրական ոյժով,  
լուսաւորութիւնով, վառելիքով, արամվայով, տէլէֆօնով,  
իր փողոցների կանօնաւորութեամբ ու սալայտակներով  
և այն և այն և, վերջապէս, գան նրանք օգնութեան քա-  
ղաքիս բնակիչներին ամենաաժան գներով (գոնէ ոչ աւելի,  
քան մինչև օրս ծախում են) մատակարարելու ջուր, ոյժ,  
լոյս, վառելիք կամ աարութիւն:

— Բայց ինչպէս կարելի կլինի հասնել այդ բոլո-  
րին, կհարցնէ մեզ մեր ապշած ընթերցողը:  
Երեակայութեան և ցնորդների մէջ չենք ընկնում  
արդեօք մեր այս առաջարկութեամբ:

Ոչ, կպատասխանենք մենք, այս բոլորն իրավործելի  
է, շատ շուտ և շատ հեշտ իրավործելի, քանի որ ունենք  
մենք Զանկուի ոլէս մի գեա մեր կողքին, մեր քթի տակ,  
որը մի անյատակ հարստութիւն է, անսպառելի, կենսա-  
կան աղքիւր, որի արժէքը միլիարդի կարելի է հաւասա-  
րել, բայց որին արհամարհում ենք մենք, որից չենք ուզում,  
նոյն իսկ լայեադ չենք անում օգտել և որին չենք արժան  
համարում ծառայեցնել մեզ զիտութեան ու նորանոր հնար-  
քագիտութեանց սահղուած պայմաններով:

Ուսւաստանի ոչ մի քաղաք չունի այն հարստութիւ-  
նը, ինչ մենք ունենք: Եթէ մեր Զանկուն լինէր փոքր ի  
շատէ կուլտուրական քաղաքի մօտ, հրաշներ կստեղծւէին  
այնտեղ, այնպիսի հրաշքներ, որ հազիւ թէ մարդկային  
երեակայութիւնը կարողանար ձեւակերպել:

Բայց մի կողմ թողնենք հրաշքների աշխարհը և  
մտնենք իրական կեանքի մէջ, խօսենք թէ մօտաւորապէս  
ինչ միջոցներով կարելի կլինի հասնել վերևում յիշած յար-  
մարութիւններին, թէ ինչպէս պիտի ստեղծենք այդ ամե-  
նը և որբան համապատասխան կլինի այդ մեր ոյժերին:

III.

Մեր քաղաքը միաժամանակ պէտք է ձեռնարկի մեծ  
ջրանցքի, կոյուղու, տրամվայի, տելէֆօնի և որ գլխաւորն  
է մի այնպիսի Էլէքտրական կայարանի (станցիա) շինու-  
թեան, որի զօրեղութիւնը հասնէ ոչ պակաս քան 3000  
ձիու ոյժի:

Այդ Էլէքտրական կայարանը պէտք է տայ մեր քաղա-  
քին լոյս, վառելիք (աաքութիւն) և ոյժ:

Ինչպէս ոյժն ու լոյսը, նոյնպէս և վառելիքը պիտի  
այնպիսի զրութեան մէջ զնել, որմնցից օգտւեն, ոչ միայն  
քաղաքը իր արամվայով, լուսաւորութիւնով, մասամբ և  
տէլէֆօնով, այլ և քաղաքիս բնակիչները, նոյն իսկ ամե-  
նաարաները հնարաւորութիւն ունենան փոխարինել ի-  
րենց նաւթն ու վառելիքը (ցախը), ինչպէս և ածուխը՝  
նոյն կայարանից ստացած էնէրգիայով:

Պէտք է հասցնել այն աստիճանին, որ Էլէքտրակա-  
նութիւնը ոչ թէ շեղութիւն համարւի և այն՝ հալուս-

ների համար միայն, այլ և անհրաժեշտութիւն լինի ամեն-  
քի համար և դիւրամաշերի աղօատների համար:

Այս նպատակին կարիք է հանել մեր յիշած ահա-  
գին կայարանի կառուցմամբ միայն:

Թայց մեզ կհարցնեն թէ ինչո՞ւ ենք կապում ջրանց-  
քը, կոյուղին, տրամվայը, տէլէֆօնը, լուսաւորութիւնը և  
վառելիքը (տաքութիւնը) իրաբ հետ, իրըև միմիանցից ան-  
րաժան գործոններ, քանի որ ջրանցքը և կոյուղին, ինչ-  
պէս և մասամբ տէլէֆօնը ոչ մի կապ չունեն էլէքտրական  
կայարանի հետ:

Սյդպիսի հարցին մենք կպատասխանենք. ինչպէս  
առաջինը, նոյնպէս երկրորդը, այսինքն ջրանցքն ու կոյու-  
ղին, կաւելացնենք այստեղ նաև տրամվայը, իրենց խիստ  
անհրաժեշտութեամբ հանդերձ, պահանջում են մեծամեծ  
սկզբնական կառուցման ժամկեր, զգալի և խոշոր գումար-  
ներ և որոնք, իրենց տւած հաւանական եկամուտներով,  
անվերջ արիսների ընթացքում չեն ծածկիլ ոչ միայն ի-  
րենց վրայ գործ դրած նախնական գումարները, այլ նոյն  
իսկ չեն հանի այդ գումարների տոկոսները, սրովհետև  
նրանց էկսպլոատացիան միայն կլանի շատ հազարներ,  
գուցէ և աւելի, քան նրանցից ստացած մուտքը կարող էք  
լինել: Մյն ինչ այդ բոլորը միացնելով էլէքտրականութեան  
հետ և ընդհանուր ծախքերն ու եկամուտներն ի մի առնե-  
լով, ոչ միայն կծածկեն ծախքերը, գումարների տոկոս-  
մարների զեղջելը, հանգցնելը, այլ նաև կայա մի խոշոր +,  
մի պատկառելի եկամուտ մեր քաղաքին, որով կարելի կլի-  
նի դիմել քաղաքի մնացած անհրաժեշտ պակասները լրա-  
ցնելու, ինչպէս և փողոցների կանոնաւորումը, սալայատա-  
կումը, մեծած ախք հիւանդանոցի կառուցումը և այն և այն:

Այս բոլորին հասնելու համար՝ նախ հարկաւոր է մի

սրոշ ծրագիր կազմել, անհրաժեշտ գումարների շափն ու  
քանակը որոշել, աւելացնելով այդ գումարին նաև քաղա-  
քին 100,000 ը. պարաբը և դիմել փոխառութեան:

Հիմայ դիմենք թւերի:

IV.

Տեսնենք թէ մօտաւորապէս ինչ կատանայ այդ ձեռ-  
նարկութիւնը իր բարբ մասերով, որքան տարեկան եկա-  
մուտ կարող է ունենալ և սրբան ծախք<sup>\*\*</sup>):

Պէտք է աւելացնել այստեղ, որ մեր մօտաւոր հաշմա-  
ներից երեսմ է՝ այդ ձեռնարկութիւնը իրականացնելու և  
քաղաքիս պարաբը վճարելու համար՝ անհրաժշտ կինի  
փոխառութեամբ ձեռք քերել մինչև 800,000 բուբ.

Պատրաստի ունենալով այդ գումարը պէտք է կա-  
ռուցանել միաժամանակ.

1). Նըմբուլաղի ջրանցքը, ինչպէս արդէն նախագծւած  
է. սա կարժենայ մօտաւորապէս 250,000 ը.

2). Կոյուղին<sup>\*\*</sup>), իթէ առայժմ աաքւի միայն երեք  
գուգնթաց և թէք փողոցներով քաղաքի մէջ՝ իրեւ մազի-  
ստրաներ, օրինակ՝ Աստաֆիկ վայայ (սկսած Այդինեան-  
ների տնից), Գուրենսկայա (սկսած Փանահ խանի տան  
վերելից) և Կալավանսարանյակայա (սկսած Խուղարաշեան-  
ների տան վերելից). սրանք միանալով Ալարօղկայ փողո-  
ցում մի մեծ կոյուղիս կանցնեն մինչև քաղաքիս հողերը:  
Բոլոր գծերը միասին կինեն մօտաւորապէս ութ վերսա

<sup>\*)</sup> Մենք մեր այս հաւանական հաշիներում աշխատել ենք զնա-  
հատել ամեն մի մաս աւելի, քան կարող է արժենալ, եկամուտները  
պակաս ցոյց տալ, իսկ ծախքերը շատ աւելի:

<sup>\*\*)</sup> Այս մասին մինք գեռ կիսուներ առանձին յօդւածով:

տարածութիւն. հաշւելով 25 բուրլի սաժէնը, կպահանջէ 100,000 ր.

3). Տրամվայի էլէրտրականի փոխելու և նոր գծեր աւելացնելու համար, մօաւառապէս 10 վերստ տարածութեամբ՝ 120,000 ր.

4). էլէրտրական կայարանը երկու ձեռք տուրբիններով (մէկը գործող, միւսը պահեստի՝ անակնկալների համար) ոչ պակաս քան 3000 ձիւ զօրեղութեամբ, որից պիտի ստացւի լոյս, ոյժ և տաքութիւն՝ կարժենայ մօաւառապէս 150,000 ր.

5). Տէլէֆօնի կայարանը իր ցանցերով և անհրաժեշտ կազմով կարժենայ մօաւառապէս 30,000 ր.

6). Կվճարուի քաղաքիս վրայ ներկայումս ծանրացած պարտը 100,000 ր.

7). Առձեռն կմնայ զանազան անակնկալ ծախքերի կամ յաւելումների համար 50,000 ր.

Անցնենք հիմայ այն հարցին, թէ ո՞րքան հաւանական եկամուտներ կտայ մեր յիշած ձեռնարկութիւնը իր բոլոր մասերով:

1). Քրանցքը, եթէ ընդունենք քաղաքիս աղգաբնակութիւնը, որ 30,000 է, օրական ծախսի մարդագլուխ 3 դոլ. (այս հաշվի մէջ են մտնում նաև փողոցների ջրելը, զօրքի, բաղնիսների, հացթուխների, ջրային գործարանների և այլն և այլն պահանջները) կարող է տալ տարեկան ոչ պակաս քան 50,000 ր.

2). Կոյողին, եթէ օգաւեն քաղաքիս 4500 տնից միայն 500-ը և վճարեն թէկուղ տասական բուրլի տարեկան—5000 ր.

3). Տրամվայը ներկայումս և ներկայ դրութեամբ տալիս է ընդհանուր մուտք 22,000 ր. \*) (ծախսում է մօտ 24,000 ր.).

4). Քաղաքը հիմայ ծախսում է լուսաւորութեան համար 13,000 ր.

5). Ամեն մի տուն ծախսում է իր բնակարանի լուսաւորութեան (նաևթի) համար միջին թւով 2-50 կ. ամսական, իսկ տարեկան 30 ր.: Եթէ ընդունենք, որ քաղաքից միայն 1000 տունը օգտի էլէրտրական էնէրգիայից լուսաւորութեան համար, տարեկան մուտք կտացւի 30,000 ր.

6). Եթէ ընդունենք, որ այդ 1000 տունը ծախսում է երկու վառարանի (փեշի) և մէկ պիտայի (կամ օջաղի) համար տարեկան երկու սաժէն փայտ 80 բուք. արժողութեամբ, կնշանակէ էլէրտրականի փոխելով այդ ծախքը կտացւի տարեկան 80,000 ր.: Այս հաշվի մէջ մտնում է նաև հնշտակուը, ութօղի և այլ մանր բաների վրայ գործ գրած ածուխն ու փայտը, որ իրական կեանքում բաւական ծախք են խլում ամեն մի տանից:

7). Եթէ քաղաքումս եղած գործարանները, ոկսած ամենափոքրից մինչև ամենամեծը, այն աստիճան աժան ոյժ ստանան մեր կայարանից, որ մի թիշ պակաս նստի, քան իրենց շաբթիշ մեքենաների ծախքը, ինչ ասել կուգէ, որ իսկոյն կվաճառեն իրենց մեքենաները և կօգտան քաղաքիս կայարանի արտադրած էնէրգիայից: Ուրեմն հնց այսպիսի գործարաններից կարող է ստացւել տարեկան ոչ պակաս քան 6000 ր.

8). Տէլէֆօնից, եթէ օգտեն միայն 1000 տուն և վճարեն քաղաքին տարեկան թէկուղ 25-ական բուրլի (ու-

\*) Իսկ եթէ քաղաքիս չորս ծայրելն էլ տարեկին գծերը, ինչպէս նորք, կոնդ, ֆաժուրբուլադ, վակզալ (10 վերստ) անշուշտ կկրկնապատկի եկամուտը:

ըիշ տեղերում արժէ 75—120 ր.), գոյանում է 25,000 ր.  
և 9). Քաղաքը չի վճարի տարեկան 12,000 ր. պեսի  
գանձարանին իր 100,000 ր. պարաբի համար:

Այս մօտաւոր հաշվից երեսում է, որ յիշած ամբողջ  
ձեռնարկութիւնից՝ իր բոլոր մասերով և իր 100,000 ր.  
պարաբի վճարումից տարեկան մուտք կարող է ստացնել  
243,000 ր.:

---

- Հիմայ էլ հաշւենք մօտաւոր տարեկան ծախքերը:
- 1). Զբանցքի էրսպլոատացիան և կարելի կարկա-  
տանիք կարող է հասնել մօտ 15,000 ր.
  - 2). Կայուղին ոչ մի ծախք չունի, բայց կարկատան-  
քից, որը միջին թուզ կհաշւենք 3000 ր.
  - 3). Տրամվայի էկոպլոատացիան և կարելի կարկա-  
տանիքները՝ 15,000 ր \*)
  - 4). Էլեկտրական կայարանը իր կարկատանիքով և  
վարչական կաղմակերպութեամբ 25,000 ր.
  - 5). Տէլէֆօնի վարչութիւնը և կարկատանիքը 10,000 ր.
  - 6). 800,000-ի տարեկան տոկոսը 6-ով՝ 48,000 ր.  
Իսկ զեղչը՝ 40,000=88,000 ր.
- Այս հաւանական հաշվից երեսում է, որ ամբողջ ձեռ-  
նարկութեան ընդհանուր ծախքը կարող է լինել մօտաւո-  
րում՝ 156,000 ր.

Աւրեմն, հանիւով ծախքը մուտքից, քաղաքը կարող է  
դուռ արդւնիք ստանալ տարեկան 87,000 ր.

---

\*) Հանում ենք ներկայումս հզած ծախսից մօտ 10,000 ր. Ճե-  
քի և նրանց պահպանման ծախքերը:

Իսկ եթէ այս 87,000 ր էլ շտանիայ, ինչ կկորցնի  
բաղաքը: Միայն հաստատավէս կարելի է առել այն, որ  
նա կգտնի 15 տարւայ ընթացքում յիշած ամբողջ ձեռ-  
նարկութիւնը և վճարած կլինի իր 100,000 ր. պարաբը,  
իրենից շղնելով և ոչ մի կոպէկ:

V.

Միջանկեալ և ի գէպ աւելացնենք այսաեղ նաև կող-  
մակի հաւանական ծախքերի և արդինքների մասին, քա-  
նի որ մենք պատրաստ կանենանք էլեկտրական կայարա-  
նը 3000 ձիւ զօրեկութեամբ:

Մենք կարծում ենք, եթէ քաղաքը յիշած փոխառու-  
թեան գումարին աւելացնի եռ 200,000 ր., այն գէպշում  
կարելի կլինի շինել նաև էլեկտրական տրամվայ մինչև Վա-  
զարշապատ, ինչպէս և լոյս և տարութիւն մատակարարել  
էջմիածնի միարանութեան ու ձեմաբանին և, որ զիստ-  
ուրն է, ոյժ անցկացնել մինչև Եթ ջուրը և անտեղից ջուր  
հանել ու ոսովել էջմիածնի և նրա ըրջակայքի գիտօրէից  
ուելի քան 3000 գլուհային տիջրպի հողերը:

Մասնագէտների կարծիքով այս արամիայը կարծենայ  
մօտաւորապէս 180,000 ր., իսկ չըարաշխութիւնը՝ 40,000  
որ ընդունենք կանէ 220,000 բուր : Մրա պակաս 20,000-ը  
կարելի է լրացնել մեր յիշած (զուխ IV-ում) առ ձեռն  
50,000 ր. զումարից:

Իսկ ինչ եկամուտ կարող է տալ այս ձեռնարկու-  
թիւնը:

Փորձենք և այս հաւանական թւերսվ ձեռկերպել:

- 1). Եթէ երեսնից մինչեւ Վազարշապատ բաց թող-  
նել օրական մէկ վագոն, այնտեղից էլ մինչեւ քաղաք-  
նոյնելու մէկ վագոն մարդատար և միայն մէկ վագոն ա-  
պլանքատար,

եթէ ամեն մի վագօն օրական չորս անգամ գնայ դայ, այսինքն 12 անգամ, և

եթէ հաշւենք ամեն մի գնացքը կամ վերադարձը միջին թւով 5-ական բուրփի,—

օրական եկամուտ կարող է ստացւել 60 ր., ամսական 1800 ր. և տարեկան 21,600 ր.

2). Վանքի և ճեմարանի ինչպէս և վաղարշապատի մի քանի բնակիչների լուսաւորութիւնը՝ մօտաւորապէս 3000 բուրփ.

3). Նոյն տեղերի վառելիքը (փեշերի և պլիտաների) մօտաւորապէս 7000 ր.

4). Եթէ վանքի և զջակայրի հինգ գիւղօրէից անըգի հողերին ջուր մատակարարւի, հաշւելով ամեն մի դէսետակին սուզելու վարձ տարեկան (4-5 ամիս միայն) 15 ր.—45,000 ր-

Ընդամենը հաւանական եկամուտ կլինի 76,600 ր.

Ո՞ւրան ծախը կարող է լինել:

1). Օրական ամեն մի վագօն կունենայ մի վատման երեք հոգի, նոյնքան էլ նրանց փոխարինելու համար. 6 հոգուն 3000 ր.

2). Մէկ կայարան երեանում և մէկ—վաղարշապատում թէ հսկելու և թէ տոմսակներ վաճառելու համար և մէկն էլ Փարաքար գիւղում, իբրև հսկիչ երթեեկող վագոնիների—1500 ր.

3). Կարկատանքներ թէ գծերի, թէ լուսաւորութեան և թէ ջուր մատակարարս խողովակների ու նապօնիների—10,000 ր.

4). Աղմինիուսրացիան և միւս մեծ ու ստորին ծառյողները այդ երեք ձեռնարկութեանց—10,000 ր.

5). Գրամագլխի տոկոսը 12,000 ր. և համեմելը 10,000 ր. տարեկան—22,000 ր.

Ընդամենը հաւանական ծախը՝ 46,500 ր.

Կնշանակէ այս ձեռնարկութիւնն էլ իր մասերով կտայ տարեկան զուտ արդիւնք մօտ 30,100 ր.

Եթէ հիմայ մի աշքի ընկնող օգուտ չէ սա, դոնէ, յամենայն դէսպ, վնաս էլ չէ. բայց 15-16 տարուց յետոյ այդ ամենը կիմնայ զուտ աշխատանք մեր քաղաքին՝ տարեկան 50-60,000 հկամուտով: 2է կարող միթէ մինչև այդ ժամանակ և այնուհետև եկամուտները նաև կրկնապատկեւլ:

Բայց մենք դառնանք ուս այժմ միայն երեանի վերաբերեալ ձեռնարկութեան:

#### V I.

Ուրեմն, այսպէս թէ այնպէս, 15-16 տարուց յետոյ, քաղաքը, բացի այն, որ վճարած կլինի 800,000 ր. փոխառած գումարը և իր 100,000 ր. պարտքը, (որը հակառակ դէպրում երբէք չէր կարող վճարել, քանի որ տարէց տարի կաւելանար և կրաղմապատկէր պետական տոկոսները (ուղարկած) ու հրէշաւոր գումարների հիմնէր և քանի որ բազմքիս եկամուտները երբէք չեն արդարացնիլ իր սեփական ծախքերը), այլ և կարող են շինել տարեկան աւելցուած եկամուտներով (87,000 ր.) և հիւանդանոցը, որ տեղի բան անհրաժեշտ է, ինչպէս և կանոնաւորած և սալյատակւած, եթէ ոչ բոլոր, գոնէ շատ ու շատ փողցները \*):

Խոկ եթէ բաղաքը կթափէր իր ամբողջ պարաքը իր տոկոսներով,—եկամուտը կդառնար տարեկան 178,000 ր. (բայց չէ որ կարող է կրկնապատկեւլ էլ):

\*]. Այս փողոցների մասին էլ կխօսենք առանձին յօդւածով:

Այսպէս ուժեմն՝ իրականացնելով լիշեալ ձեռնարկութիւնը իր բոլոր մասերով՝ քաղաքը հնարյաւրութիւն կունենար էլէքտրական լուսաւորութիւնը և տարրութիւնը իր խիտ ցանցերով, ինչպէս և արամվայր, հասցնել քաղաքին ամեն ծայրերը, ամեն թաղերը. օրինակ նորք քաղաքամար, Կոնդը, Դամուրբուլաղը, վակզարլը:

Կարող կլինէր նոյն իսկ մեր ջրանցքի աւագանից նասոսով ջուր մղել դէպի նորք, Կոնդ և այն տեղերի բնակութեանցն էլ մաքուր, անարատ ջուր մատակարարել:

Կարող կլինէր իր ջրանցքի ծորակների թիւը կրկնապատկել, եռապատկել, որպէս զի քաղաքացինեցս օգտէինը աւելի յարմարութիւններով:


Կարող կլինէր ժամանակի ընթացքում իջեցնել մինչմումի բնակիչներից ստացած իր տուրքերի (Ճոխոց) բանակները, իսկ մի քանիսները բոլորովին վերացնել:

Վերջապէս կարող կլինէր ձեռնարկութեան ամեն մի մասերի տարեկան վճարն էլ այն աստիճանի աժանութեան հասցնել և փորձն այնպիսի հիմքերի վրայ դնել, որ քաղաքին 4500 եղած տներն էլ, առանց բացառութեան, հնարյաւրութիւն ունենային օգտելու մեր Զանգսի և ժամանակակից գիտութեան ու հնարյագիտութեանց բարիքներից:

Եւ մեր Զանգսուն կարող կլինի մեր քաղաքին տալ այդ բոլորը, ինչպէս և կարող կլինի, կարեսը դէպրում, տալ միզ 10,000 և աւելի ծիռ ոյժ, եթէ մի օր այդ պահանջի կարիքն էլ զգալու լինենք:

## VII.

Մենք մեր այս յօդւածներում կարելոյն շափ մանրամատն կերպավ զրեցներ քաղաքիս անտեսական դրութիւնը ապահովելու մասին, քաղաքիս բարպաւաճման և բարեկեցութեան մասին, ինչպէս և քաղաքացիներիս համար ամեն



Հնարաւոր յարմարութիւններ առեւծելու նամակն 1958 ապրիլաց բարեկամութեան մասին, գոյցը մեռնելու դժւագայ բոլորն ինչ նշանակութիւն կունենայ բարպաւաճման կան և բնակչութեանս առողջապահական դրութեան առողջապահութեան:

Մենք կուգէինք այս մասին էլ մի երկու խօսք ասել հարևանորէն, թուուցիկ կերպով, թողնելով աւելի մանրամատն զննութիւնը մեր մասնագէտներին, թիշկներին:

Մեզ քաջ յայտնի է, թէ վարակիչ հիւանդութիւնները երեալիս (որ շատ պայծառ է մեզանում) ինչ արագութեամբ են տարածւում քաղաքիս ամեն մասերում և որքան գոհեր են տանում:

Մեզ յայտնի է շատ լաւ, որ մալիսարիան ինչ աստիճանի խորունի բուն է զրել մեզանում, որ տարեկան տասն երկու ամիս տիրապետում է քաղաքում և տառապեցնում բնակչութեանս ամիսներով, տարբիներով:

Մեզ յայտնի է, որ ամառան չոգերն ու թողը ինչ գեր են կատարում մեզանում և աշքացաւը ինչ աստիճանի յամառութեամբ շարունակում է իր վնասակար քայլայիշ գերը կատարել համարեա ամեն մի տան մէջ:

Մեզ յայտնի է նոյնպէս, թէ ճանճն ու մժեղը, մոծակն ու մլակը սրպիսի բազմանալու առատ նիւթ ունեն քաղաքում, ինչ աստիճանի անհանգստութեան, նոյն իսկ տանջանքների են հասցնում բնակչութեանս իրենց խայթացներով, իրենց վրդովեցուցի յամառութեամբ և ինչպէս են նրանք այդպիսով պատասառում վարակումները հիւանդներից առողջներին:

Ահա այս բոլորի առաջը, եթէ չի կարելի լինի հիմնովին առնել, կարելի է գոնէ հասցնել մինիմումի:

Որովհեան՝

եթէ մենք ունենանք մաքուր, անապական, առողջարար ջուր գործադրութեան համար,

687-2005  
1945/303

եթէ կոյուղին կարելոյն չափ մտցնել քաղաքումս, որով ջրի զորութեամբ իսկոյն կմաքրւեն ամեն մի մարդու արտաթորութիւններից արտաքնոցները,

եթէ նոյն կոյուղու միջոցաւ անմիջապէս դուրս կմւեն քաղաքից լացքաջլերը, աղտաջըերը, աղտեղութիւնները,

եթէ տներից ու խոհանոցներից դուրս եկած դիրիւները, աւելցուկները, փառդ, անպէտք առարկաները դուրս կտարւեն ամենայն շաբաթ այնպէս, ինչպէս մենք ասել ենք արդէն Թրաբ. Օճ-յա-ի անցեալ տարւայ № 58-ի մէջ և շարունակ այդ ամենը կուտակւած չեն մնայ ամիսներով ու չեն առաջացնի փուռմն և գարշահոտութիւն,

եթէ մեր էլէքտրականութիւնը դուրս կվանդէ ցախն ու ածուխը մեր տներից և կազատէ մեզ ծխից ու միսից, վառարանները (ֆէշէրը) անժամանակ փակւելուց և հեշտաեռները անժամանակ ներս բերելուց առաջացած ածխահոտից (յորք),

եթէ նոյն էլէքտրականութիւնը մեր տներից դուրս կվանդէ նաև նաւթային լուսաւորութիւնը, որով մենք կորցնում ենք մեր սենեակների ածխածինի մեծ մասը և ընդհակառակն աւելացնում ենք ածխաթթւուտը, կամ ապականում ենք մեր անգուշութեամբ մեր սենեակների օղը անկանոն վառած լամպաներից առաջացած հոտով, ծուխով ու մուրով (ռոպու),

եթէ պարբերաբար կմաքրւեն մեր փողոցները, կջրւեն օրը 3-4 անգամ և չեն թողնի թողի զարգանալուն, իսկ մեր երևանի փրկարար քամին կանցնի իր սովորական ընթացքով քաղաքին վրայով, միջով և կմաքրի օղը

և այսպէս հաղար ու մի „եթէ“-ների առաջը հնար կունենանք առնելու մեր այս մեծ ձեռնարկութեամբ,

այն ժամանակ դրականապէս կարելի է ասել, որ մեր քաղաքը մի այնպիսի առաջադիմութիւն կունենայ, մի

այնպիսի կլիմայական և առողջապահական ներդաշնակութիւն կստանայ, որին կնախանձեն շատ ու շատ կուտուրականապէս զարգացած ու առաջադիմած քաղաքները և մեր քաղաքը օրինակելի կդառնայ շատ շատերի համար:

Այս, այս բոլոր մեր առածները ֆանտազիաներ չեն, ինչպէս շատ գուեհիկներ տրամադրի կլինեն կարծելու. այս բոլորը հեշտութեամբ իրագործելի են և այն ոչ ուշ քան մի երկու տարւայ ընթացքում,

եթէ միայն հաստատուն կամք, անշեղ ցանկութիւն լինի մեր քաղաքի վարչիների կողմից:

### VIII.

Ի՞նչ է մնում անելու:

Մեր քաղաքի զեկավարներին մնում է միայն մեր այս առաջարկութեան մասին լուրջ մտածել, թերահաւատութեամբ չվերաբերել այս բոլորին, հարց բարձրացնել Դումայում այս կենսունակ խնդրի մասին և ըսկել գործը, քանի որ այդպէս են թելաղում մեզ մեր գիտակցութիւնը, ժամանակակից գիտութիւնը, մեր քաղաքի աստածատուր դիրքն ու մեր Զանգի ընութիւնից օժտած վերէն ի վար հսկող ընթացքը:

եթէ մեր քաղաքի հայրերը բանի տեղ չեն զնում քաղաքիս կլիմայական և առողջապահական բարոքման անհրաժշտութեան խնդրերը, պէտք է մտածեն զոնէ նրա անտեսական դրութեան մասին:

եթէ առաջինը նրանց համար նշանակութիւն չունի, պէտք է նշանակութիւն ունենայ անշուշտ երկրորդը:

Թէ առաջինը և թէ երկրորդը անհրաժեշտ են, իբրև մէկը միւսին լրացնող, մէկը միւսին ապահովող գործօններ:

Այս են պահանջում մեր քաղաքի ու ընակըութեանս

և անտեսական, և կլիմայական, և ասողջապահական, և  
նոյն խոկ բարոյական շահերը:

Այս ենք պահանջում, և մենք:

Եւ մեր իրաւասուները պարտական են ընդառաջ գնա-  
լու այդ պահանջներին ու շահերին, եթէ իրօք նրանք  
զգում են իրենց բարոյապէս պատասխանատւ իրենց  
ընտրողների առաջ, իրենց ամբողջ յոյժն ու ապագան  
նրանց վրայ գնող հասարակութեան առաջ, քաղաքիս ազ-  
գարնակութեան առաջ...

Դրանցից զոհաբերութիւն չէ պահանջւում. պահանջ-  
ում է միայն ջերմութեամբ կաշել ինդրին և զործը զնի  
մի հաստատուն հիմքի վրայ.—և սրիշ ոչնիշ:

Դրա համար հարկաւոր է միայն.—

Հարցը Դումայում զբականապէս վճռելուց յետոյ՝ ան-  
միջապէս ընտրել մի խոհուն և եռանդուն մասնաժողով  
իրաւասուներից, հրաւիրել մի քանի մասնագէտ ճարտա-  
րապետներ (թէկուղ վարձով), մանրամասն քննել ամբողջ  
ձեռնարկութիւնը իր բոլոր մասերով, կազմել մի լնդհա-  
նուր ծրագիր, մատեմաթիկական հաշիւներով ճշգել ամեն  
կետերը, որոշել ամեն մասի արժէքը և այդ բոլոր մասերի  
գումարները ի մի գումարել, եզրափակել այդ ամբողջ ձեռ-  
նարկութեան ճիշտ արժէքը և ապա այս բոլորի մասին գե-  
կուցանել Դումային:

Դումայի հաւանութիւնն ու իշխանութեան պատշա-  
ճառոր թոյլաւութիւնն ստանալուց յետոյ՝ բանակցութիւն-  
ներ սկսել բանկերի կամ յայտնի ընկերութիւնների և կամ  
սրոշ կապիտալիստների հետ և ձեռք բերել փոխառութիւն:

Ապա զիմել Ռուսաստանի կամ արտասահմանի յոյտ-  
նի ընկերութիւններին, կամ ամբողջ ծրագրի գլխաւոր  
կետերը յայտարարելով ամեն աշրի ընկնող լրագրներում  
(Ռուսաստանի և արտասահմանի), հրաւիրել ցանկացողնե-

րին այս բոլորն իրագործելու մրցութեան և պայմանաւոր-  
ւել այն ֆիրմայի հետ, որի վստահելիութիւնն ու առա-  
ջարկութիւնը ամենածեռնուուն կլինի քաղաքիս համար:

Դործը վերցնող ընկերութեան պարտականութիւնը  
պէտք է լինի կառուցանել ձեռնարկութեան բոլոր մասերը  
միաժամանակ, կարգ ու սարգի տուկ դնել, կանոնաւորել  
ամեն ինչ, գեռ մի երկու կամ երեք տարի էլ քաղաքի հա-  
մար վարել ամբողջ զործը և ապա արդէն՝ կազմ և պատ-  
րաստ յանձնել քաղաքին ամբողջ ձեռնարկութիւնը:

Եթէ ներկայում Թիֆլիզը կարող է մտածել մինչև  
իսկ 50-55 միլիոն փոխառութեանց մասին բաղաքի պէտ-  
քերի համար և արդէն երեք միլիոնի փոխառութիւնն յաջո-  
ղեցըել է, ինչի մեր քաղաքը չէ կարող մտածել, հոգալ,  
իրագուծել թէկուղ մէկ միլիոնի փոխառութիւնը:

Եթէ Բագրի „Օլէսում“ Փիրմայի գիրէկտորներից մէկը,  
—պ. Տվիդ (որ միհնոյն ժամանակ անգլիական երեք խո-  
շոր ֆիրմանենի ներկայացուցիչն է) կարող է առաջարկել  
Բագր բաղաքին հինգ միլիոն փոխառութիւն կնքել իր ա-  
ռաջարկած ֆիրմաներից, ինչի նոյն Տվիդը չէ կարող  
թէկուղ մէկ միլիոնի փոխառութիւն իրագործել մեր քա-  
ղաքի համար, գեռ աւելի ձեռնուու պայմաններով ու առ-  
կուսներով, քան մենք ենք նախատեսել:

Եթէ նոյն Բագրուն կարող է 28 միլիոն փոխառութիւն  
անել միմիայն մի հասիկ ջրանցքի կառուցման համար,  
ինչի մեր երեանը շի կարող մի ողորմելի 800,000 կամ  
թէկուղ մէկ միլիոն փոխառութիւն անել և այն ոչ միայն  
մի հատիկ ջրանցքի համար, այլ մի շարք անհրաժեշտ և  
արգիւստուր կառուցումների համար:

Միթէ կարող է կառկած լինել զբա մասին:

Մեր քաղաքի այսպիսի բաղմակողմանի ձեռնարկու-  
թիւնը ունի և իր ոչ պակաս կարեոր կողմը. այն է՝ նախ

այդ գործերում կունենան մի կտոր հաց, ապրուստ քաղաքիս բնակիչներից շատերը և ապա՝ տեղեր, պաշտօներ կունենան մեր քաղաքի այն սրդիները, որոնք ուսանում են ճարտարապետական մասնաճիշերը՝ հէնց իրենց բնակավայրում և ստիպւած չեն լինի իրենց բաղդը որոնելու օտար, հեռաւոր երկրներում:

## ՎԵՐՋԱԲԱՆ

Սյս բոլորն ինչ մենք առաջարկում ենք մեր քաղաքի ղեկավարներին ու հայրերին, անշուշտ շատ պակասաւոր կողմեր կունենան, քանի որ մենք մասնագէտ չենք և չենք կարող զիմնել մասեմասիկական մանջակըկիա թւերի, ճշտութիւնների, հետազօտութիւնների և ապացոյցների:

Մեր բերած թւերը, մեր բերած կարծիքները, մեր ենթագրութիւնները թուոցիկ են և հետեւանք ոչ թէ խոր ուսումնասիրութեան, այլ—գոյութիւն ունեցող բազմաթիւ օրինակների ու փաստերի, գուտ շրջահայեցողութեան և ոչ պակաս հաւանականութեան:

Մենք միայն դնում ենք մեր հասարակութեան, մեր Դումայի առաջ այս կենսունակ ինդիքը, որի համար արժէ մտածել, արժէ գլուխ ցաւեցնել:

Անուբանալին այն է, որ այս ամենը ձեռք բերելու համար, քաղաքը օրինակելի զարձնելու համար, նրա առաղջապահական և անտեսական գրութիւնը բարձրացնելու համար, քաղաքացիներիս այսպիսի յարմարութիւններ տալու համար, ոչ միայն 800,000 կամ մի միլիոն, այլ կրկնակի, եռակի փոխառութեանց կարելի է զիմնել, քանի որ գործը հէնց սկզբից անվնաս է, (չենք ասում լիուլի օգտաւէտ), քանի որ մեծ ապագայ ունի, քանի որ կարելի կլինի հանգ-

ցնել այդ փոխառութիւնը մի երկու տասնեակ տարիների ընթացքում իր տոկոսներով:

Թայց ցաւում ենք, որ մենք սովոր ենք շարունակել այն, ինչ որ կայ, նոյն նահապետական ձեռվ ու կարգով: Մենք երբէք շենք ձգուում դէպի լաւը, դէպի կատարեալը, դէպի լուսաւոր երկրների մեծ քայլերով առաջ դնացող կուլտուրան:

Մենք անսովոր ենք նորանոր նտխաձեսնութեանց ու ձեռնարկութեանց:

Մենք կարող ենք այն ժամանակ միայն կուլ տալ մեր ուսելիքը, երբ արդէն ծամած կդնեն մեր բերանները...

Ո՞վ կարող էր երեակայել, որ մեր քաղաքը էլքրտրական լոյս կունենար:

Ո՞վ կկարծէր, որ էլքրտրականութիւնը կարող էր յաջողութիւն և պահանջ գտնել մեր երեանում և այսպէս իրար ձեռքից կիւլէր... այն ինչ մի ինժ. Կիրակոսեան և մի ինժ. Գիւնան իրենց շատ սահմանափակ գումարներով ու միջոցներով, բայց կամքի հաստատուն որոշմամբ, բուռն եռանդով և մասնագիտական հիմունքներով զինւած՝ ապացուցեցին այդ և այսօր մի անվիճելի փաստ է դրած մեր առաջ:

Եթէ ամեն մի անհատ իր մասնաւոր կեանքում չէ ձգուում դէպի առաջ, դէպի կատարեալ զարգացում, չէ մտածում իր դրութիւնն ապահովել, իր եկամուտը, իր անունը բարձրացնել, օգտակար լինել թէ իրեն և թէ հասարակութեան համար,—նա խեցզետինի նման յետ ու յետ կերթայ: Նրան մեռած պիտի համարել: Նրան պէտք է ջնջել մարդկութեան ցուցակից:

Եթէ մի քաղաքը չէ ձգուում դէպի առաջ, չէ մտածում իր քաղաքացիների բարօրութեան մասին, իր տնտեսական, բարոյական ու առողջապահական դրութեան բարւորման

մասին, այլ բաւականանում է նրանով, ինչ որ կայ և իս  
գոյութիւնը պահպանում է կեղեքելով և ոչինչ շտալով իր  
բնակիչներին՝ այդպիսի քաղաքներն իրաւումը շունեն քա-  
ղաք համարելու։ Դրանք պէտք է ջնջւեն առաջադիմու-  
թեան ձգտող քաղաքների շարքից։

Անկասկած կտանեն մեզանից շտաբը, որոնք կիր-  
րաւումն մեր այս գերջին խօսքերից, կամ մեր այս մի  
շարք յօդածների վրայ կնայեն իբրև մի յաջող ֆէյքվէր-  
կի (Փրշանդի) վրայ. ժպիտով, գուցէ և արհամարհանքով  
կկարգան մեր այս յօդածները, ուտօպիա, ֆանտազիա  
կհամարեն այս ամենը և ձեւըի մի հեղնական շարժումավ  
բարձի թողի կանեն բոլորը, իբրև անիրազութելի ծրագիր։

Թող այդպէս լինի։ Մենք չենք գարմանալ։

Խաւարը՝ խաւար է, քանի որ լոյս չկայ։ Մի փոքրիկ  
լուցկի իր վառած գլխով՝ խորտակում է իր շուրջը խա-  
ւարը։ Ճշմարիտ լոյսին ոչ մի խաւար չէ կարող խորտակել։  
Լոյսը կարող է ժամանակաւորապէս մթնել, բայց ոչ խա-  
ւարել։

Մենք չենք խոնարհի այն խաւարի առաջ, որի ու  
մթութիւնը կարող է խորտակել մի լուցկի։

Իսկ այդպիսի լուցկիներ մենք շատ կունենանք։  
Ժամանակն իրը՝ խաւարին խորտակող մի վառ աշ-  
տանակ է։

Կգայ այդ ժամանակը և հետու չէ այդ ժամանակը,  
եթե մեր ուտօպիա համարւած առաջարկութիւնը կդառնայ  
իրականութիւն։

Մենք ամբողջապէս հաւատում ենք դրան։  
Յաւում ենք միայն, որ այս ամբողջ ձեռնարկութիւնը  
վայր կամ միս օրը կարող է ընկնել մասնաւոր մարդկանց,  
մասնաւոր ֆիրմաների կամ ընկերութիւնների ձեռքը և

կշահագործւի անշուշտ ի վնաս քաղաքիս և քաղաքացինե-  
րիս շահերի։

Բայց յամենայն դէպս հաւատացած ենք նաև, ժպի-  
տով չեն նայի, ուտօպիա, ֆանտազիա չեն համարի մեր  
այս ամբողջ ծրագիրը՝ գործին տեղեակ մարդկիկ, աշխազ-  
հատես, ինտէլլիգէնտ, զարգացման մի որոշ աստիճանի  
հասած մարդկիկ, իսոհուն, հեռատես և բարեմիտ մարդկիկ,  
ինչպէս և մասնագէտ և ճարտարապետ մարդկիկ։

Ահա այն լուցկիները, որոնք պիտի խորտակեն իրենց  
շրջապատած խաւարը։

Ուստի և դիմում ենք սրանց—մեր քաղաքի հարա-  
զատ այս որդիներին—արձագանգ տալ մեր ձայնին, յայտ-  
նել իրենց կարծիքները, իսկ պա. ճարտարապետներին  
ու մասնագէտներին՝ ճշգել ամեն ինչ մատեմատիկական  
պրայացածի թւերով ու եղբակացութիւններով և լեզով  
ու գրչով առաջ մղեն այս հարցը։

Մեր ճարտարապետների, մասնագէտների և կարող  
անձանց այս առթիւ գրութիւններին, լինեն գրւած ոսե-  
րէն թէ հայերէն լեզուներով, այդ միևնոյնն է, մենք խո-  
ստանում ենք տեղ տալ մեր թերթիկում, որքան և արձակ  
ու բազմակողմանի կամ զիտական հետազոտութիւններով  
ուսումնասիրւած լինեն։


Թող չհաւատացողը՝ չհաւատայ, հեգնողը՝ հեգնի,  
թող նոյն իսկ ցնդաբանութիւն համարեն շկամներն ու  
գուեհիկները,—այդ միենոյնն է։

Մենք մեր ասելիքը պէտք է աօնքը, պէտք է նորո-  
դինը, պէտք է կրկնենք... պէտք է կարելին շափ յառաջ  
մղենք այս հարցը։

Պ.ձիոն ապագայինն է։

Ինչպէս այսօր, նոյնպէս և միշտ մեր ամենիս նշանա-  
բանը (դէպիզը) պէտք է լինի.—

Քաղաքը հաղաբացիներիս համար: Առ ձեզ բայց ու թաց յամենայն դէպս՝ ոչ թէ քաղաքացիներս քաղաքի համար: Առ ճակատում առ այս պահման օրու երջանիկ է այն քաղաքը, երբ նրա ղեկավարներն էլ այդ միակ նշանաբանով կառաջնորդւեն:



(Թաւելւած\*):

## ՄԵՐ ԿՈՅՑՈՒՂԻՆ

Թերթիս 26 Նույն տարոյս մենք խոստացել էինք խոսել մեր ապագայ կոյուղու մասին. ուստի և այսօր փորձնիք պարզաբանել մեր „Անհրաժեշտ ձեռնարկութիւն“ յօդւածների այդ ճիւղին վերաբերեալ մեր ասելիքը:

Կոյուղու կառուցումը այնպէս, ինչպէս ընդունում է գիտութիւնը կամ դրան վերաբերեալ գրականութիւնը՝ անհնարին է մեր քաղաքին երբ և իցէ իրագործել:

Սյդպիսի կոյուղին, ըստ նախագծի ճարտ. Զախմախսագեանի արժենում է միլիոններ. (մօտ 3 միլ.):

Ընդունենք, այդ միլիոնները պիտի ծախսեն մի քանի տասնեակ տարիների ընթացքում. այսինքն, աւելի շուտ անվերջ տարիների ընթացքում և տարեկան պիտի ծախսել մօտ 50 կամ 100,000 ը.

Իսկ ունի արդեօք մեր քաղաքը մի այդպիսի գումար կամ կողմնակի տարեկան աւելորդ եկամուտ, որ շարունակ և պարբերաբ դնի կոյուղու վրայ:

Եթէ քաղաքն ունի,—այդ գէպքում մեղք կլինի, որ բարձի թողի անի յիշած ճարտարապետի ծրագիրը և շիտեի գիտութեան վերջին խօսքին:

Իսկ եթէ քաղաքը հազիւ իր գլուխն է պահում և գեռ պարտքի տակ ճնշւած է՝ չնորհիւ նրա ղեկավարների անհեռատես ուղղութիւնն, այն ժամանակ ինքն ըստ ինքեան

\*.) 8եւ թրւ. 06-ին №№ 42 և 43 տարոյս:

այդպիսի ծրագիրները կմնան առանց գործադրութեան, ուրեմն և առանց հետեանքի:

Պէտք է ի նկատի առնել և այն գլխաւոր հանգամանքը, որ մեր բաղաքը խիտ բնակութիւն չունի, փուած է բաւականին մեծ և ազատ աշբաժութեան վրայ և համեմատաբար սղմւած է իր կենտրոնում միայն:

Ուրիշ բաղաքներ նոյն տարածութեան վրայ, ինչպիսին մեր երեանն է, ունեն 100-150 հազար և աւելի բնակչութիւնը հասնում է 30,000-ի միայն. որովհետև մեզնում ամեն մի տուն իր մի կամ երկու փոքրիկ բնակարաններով օգտագում է լայն բակերով, պարտէզներով ու նոյն իսկ այդիներով:

Իբրև օրինակ վերցնենք Աստաֆեան փողոցը, որի երկայնութիւնը մօտ երեք վերսա է, բայց ունի իր աջ և ձախ կողմերին ընդամենը 130 բնակութիւն կամ տուն, իսկ կենտրոնական մասում,—մինչև Կաթուղիկէ եկեղեցին՝ 80-ից աւելի և մինչև Սյոդինեանների տունը, որ հազիւ մի փերստ լինի, աւելի բան 100 տուն:

Ի՞նչ միտք ունի, ուրեմն, կոյտղու գիծն անցկացնել այդ փողոցի ամբողջ երկայնութեամբ և ի՞նչ եկամուտ կարող է տալ բաղաքին մի այդպիսի գիծը, որ հանէ ոչ թէ իր վրայ գրած ծափը, այլ գոնէ այդ գումարի տոկոսը. կամ կարո՞շ է արգեօք ստանալ իր տարեկան կարկատանքի համար գործ գնելիք անհրաժեշտ գումարը:

Մենք կարծում ենք, միանգամայն ոչ:

Բայց կայուղին նոյնքան անհրաժեշտ է մեր բաղաքի համար, որքան և ջրանցքը:

Ջրանցքն, անշաւշտ, պէտք է լինի կանոնաւոր շինուած, նորագոյն տէխնիկայի ամեն մի պահանջներով, քանի որ նըանից ստացւած ջուրը մենք դործադրում ենք մեր բնակարաններում ամեն մի կենսական անհրաժեշտութեան

համար, վերջապէս, մենք նոյնութեամբ խմում ենք այդ ջուրը ամենայն օր, գուցէ և ամենայն ժամ: Իսկ ինչ վերաբերում է կոյտղուն՝ նա պիտի մաքրէ միմիայն մարդկային անպէտք արտադրութիւնները իր բոլոր տեսակներով:

Ինչպէս ասացինք՝ գիտութեան և տէխնիկայի որոշ պահանջներն ամենարին են մեզ իրագործել կոյուղու վերաբերմամբ, ինչպէս և անհնարին է ամբողջ բաղաքում միաժամանակ և բաղաքի հաշուով կոյուղու ստորերկրուեայ խողովակները տարածել, շունենալով անհրաժեշտ զրամագութը:

Այսպիսի ցանկութիւնները աւելի շուտ խոշնդրու կլինեն յալիտեան կոյուղի ունենալու հնարաւութեանը և մենք, եթէ խիստ հետեւելու լինենք այդ պահանջներին ու ցանկութիւններին, պէտք է ընդ միշտ ձեռք քաշենք այդ մտքից:

— Իրաւացի կլինի արդեօք:

— Ոչ:

— Վայրենութիւն չի լինի արդեօք այդպիսի եղբակացութիւնը:

— Անշնչալ:

Մեզ անհրաժեշտ է ունենալ կոյուղին և առանց ուշացնելու:

Մեր կոյուղին պէտք է շինելի աւելի սահմանափակ գծերով և շատ աւելի ձեռնաու մթջոցներով:

Մեզ պէտք է հնարաւութիւն տալ գետնի տակով անցկացնելու մեր աղասա ջրերն ու ապականութիւնը, գննէ քաղաքիս խիստ բնակութեան մասերում:

Մեզ հարկաւոր է, որ բաղաքն առ այժմ գոնէ երեք զուգահետական գծեր անցկացնի բաղաքի թէք գրութեամբ, և այնպէս, ինչպէս յիշել ենք մեր այդ առթիւ յօդածում (տես № 26, IV զլուի), այսինքն՝ Աստաֆեան, Գուրէլին-

սկայա և Կարավանսարայսկայա փողոցներով և այն կետերից սկսած, որոնցից սկսում է համեմատաբար քաղաքիսխիս ընակչութիւնը:

Վատ չեր լինի, եթէ քաղաքը հնարաւորութիւն ստեղծէր մի գիծ էլ անց կացնելու Արմեանսկայա փողոցով, որի աւելացնելով հազիւ մեր նախատեսած ութ վերստը լրանար և որի շուրջը նոյնպէս խիտ է բնակութիւնով:

Զարար Գէորգեանի շինած կոյուղին մեզ կարող է լաւ օրինակ լինել, որն արժեցել է նրա վրայ սաժէնը 10 թէ 12 րուբ. միան:

Քաղաքը, ծախսելով մի անգամ, օրինակի համար 100,000 լ. այդ 3-4 գծերի վրայ, հէնց առաջին տարւանից կստանար մի որոշ եկամուտ նրանց աջ և ձախ աներից և կհանէր գոնէ նրանց կարկատանքի և անհրաժեշտ ծախքերը:

Իսկ ինչ վերաբերում է այդ փողոցների կամ կոյուղու գծերի ընդմիջող հորիզոնական փողոցներին, նրանք ինչն ըստ ինքեան կշնուեն, առանց քաղաքի նիւթական միջամտութեան:

Այդ փողոցների բնակութիւնը, ինչպէս օրինակ՝ Ցարսկայա, Բէրուտսկայա, Նավարովսկայա, Տարխանովսկայա և այլն և այլն, տեսնելով կոյուղու մեծամեծ առաւելութիւններն, յարմարութիւններն ու անհրաժեշտութիւնները, իրենք կմիանան և իրենց ընդհանուր ոյժերով և ծախքերով հետզհետէ կշնեն իրենց կոյուղիները և կմտյնեն քաղաքի շինած գծերի մէջ:

Վերջապէս ինքը կեանքը կստեղծի բնակութեան համար կոյուղիների պահանջը:

Ինչ ասել կուզէ, որ ամեն մի մասնակցող տան ակը, իրենց այդ շինած գծերում, պիտի օգտի որոշ տարիների արտօնութիւններով. այսինքն նրանք իրենց դրած ոկզինա-

կան գումարի փոխարէն՝ պիտի շվճարեն քաղաքին 10-15 տարւայ ընթացքում կոյուղու տուրբը. որ ժամանակից յետոյ նա, քաղաքը, կոտանայ ոչ պակաս տուրբ ձեռնարկութեան և այդ մասից:

Ի դէմ. պիտի աւելացնել նաև, որ հէնց հիմայ, այս շոպէիս, այս կամ այն փողոցների տների տէրեւը ցանկութիւն ունեն կոյուղիներ անցկացնել իրենց փողոցներով և իրենց ծախքերով. Մինչև անգամ մի քանի խնդիրներ են մտած այդ մտքով տեղոյն Ռևրավան. բայց թողնւած են մեր Խումայից առանց հետեանքի. կամ այնպիսի պայմանների մէջ են դրած խնդրատուններին, որոնք կամայ-ակամայ սոխապւած են հրաժարւելու իրենց մտքից:

Այս դրութիւնն ու հանգամանքն աչքի առաջ ունենալով, պէտք է կարծել, որ եթէ քաղաքը մեր յիշած 3-4 փողոցներով անցկացնի կոյուղու գծերը և յարմարութիւն տայ քաղաքիս բնակութեանը միացնել իրենց շինելիք կոյուղիները՝ արդէն շինած գլխաւոր անցքերի հետ, չի քաշի 5-6 տարի, որ քաղաքիս խիտ բնակչութեան մասերը աջ և ձախ կծածկեն կոյուղու մանր գծերով և քաղաքի, այսպէս ասած, կենտրոնը ազատւած կլինի ամեն տեսակ ապականութիւններից, վարակումներից և օգն ու առողջապահական դրութիւնը անհամեմատ կլաւանայ:

Զպէտք է մոռանալ և այն ճշմարտութիւնը, որ, որտեղ շատ խիտ է բնակչութիւնը, այնքան այնտեղ ապականւած է օղը, այնքան առատ. է նաև վարակումների զարգացումը. իսկ այնտեղ, ուր բնակչութիւնը նոսրանում է, քշանում է, իրարից հեռու է ընկնում, այնտեղարենքից դուրս եկած արտաթորութիւնները, աղտաջըքերը, աղաեղութիւնները կորցնում են իրենց համեմատական վնասակար աղղիկցութիւնը:

Բերենք գէթ մի օրինակ:

**Մօսկվայի.** Գրուգինը կոչւած թաղում մեծ աւէրմունքներ էին անում զանազան տեսակ հիւանդութիւնները. առողջապահական կամ սանիտարական տեսակետից այդ թաղը միանգամայն ապահոված չէր. մահւան դէպքերն այնտեղ համում էին հոկայական տոկոսների. բայց, երբ շինւեցաւ և այդ թաղում կոյուղն, —ինչպէս դանակով կտրած. հիւանդութիւններն ու մահւան դէպքերը հասան մինիմումի:

Եյս համգամանքի վրայ առանձնապէս ուշը դարձրեց Մօսկվա քաղաքը, տարեց տարի սկսեց կոյուղու ցանցերն աւելացնել և իր տարեկան բիշտում, շարունակ, այսօր էլ, մեծ գումարներ է յատկացնում կոյուղու նորանոր գծերի համար:

Եւ հասկանալի է. առողջապահութեան ամենատաշ-ջին պայմանն է մաքրութիւնը:

Սա արգէն մի անվիճելի ճշմարտութիւն է:

Կնշանակէ՛ պէտք է մտածել, աշխատել, ամեն միջոց գործ դնել, որ, սկզբում, մեր քաղաքի գոնէ կենարոնն ա-ղատած լինի ամեն տեսակ աղաեղութիւններից և մենք հասած կլիննը մեր նպատակին ոչ պակաս քան 80%:

Որքան շրւա շինւեն կոյուղու վերոյիշեալ 3-4 գծերը մեր քաղաքում, այնքան աւելի շրւա և շատ կաճի նաև միւս գծերի պահանջը բնակչութեանս մէջ և, ինչպէս ա-սացինք, այնքան աւելի շրւա և աննկատելի կսակեդւի կենարոնական մասերում կոյուղների մի պատկառելի ցանց: Այնուհետև ժամանակների ընթացքում, այդ ցանցը կարող է բռնել նաև ամբողջ քաղաքի տարածութիւնը:

Մասնագէտների կածիրով քաղաքի մէջ շինելիք այդ 3-4 զուգահնուական գծերը միանգամայն և ընդ միշտ բա-ւարար կլիննեն, եթէ նըանց խողովակների լայնութիւնը կամ տրամադրի լինի ոչ աւելի քան մէկ արշին, իսկ մա-

գիստրալինը (հանդեր տանող գծինը) 1<sup>½</sup> կամ 2 արշին: 8անկալի էր միայն, որ քաղաքի շինելիք կոյուղիները լինէին ձուածե խողովակներով և ոչ պակաս քան 5 արշին խորութեամբ, որպէս զի միւս ուղեկտուր փողոյներից մի-անալիք կոյուղիներին կարեոր խորութիւնը տրէր և հնա-րաւաոր լինէր աւելի թէք դրութիւն տալ նրանց:

Բայց, ի հարկէ, դա ապագայի բանն է և մասնագէտ-ների իմանալիք գործը:

Եթէ, ուրեմն, մենք ուզում ենք՝ մեր քաղաքի զանի-տարական-առողջապահական դրութիւնը բարւորել, եթէ ուզում ենք՝ ապագայ ջրանցքի և մաքուր, անա-պական ջրի գործադրութիւնը անհրաժեշտութիւն դարձնել քաղաքիս մէջ,

Եթէ ուզում ենք՝ մեր արտաքնօցները կանոնաւորել, վատէրկօգիտների դարձնել և մեր բնակարանների մէջ տե-ղաւորել, ոչ թէ նահապետական ձեռվ բակերի կամ պա-տշգամբների վերջներում շինել, որոնք ձմեռ ժամանակ տարացնելու ոչ մի հնարաւորութիւն չունեն և դրանով պատճառ են դառնում մարդկանց հիւանդութիւնները 50 տոկոսով աւելանալու,

Եթէ ուզում ենք մեր աղտաջրերն (սօմօն) ու մարդ-կային արտաթորութիւնները չմնան ամիսներով, տարինե-րով իրենց հորերում, իսկ որանց մաքրելու ժամանակ ամ-րողջ քաղաքի մէջ շտարածել նեխւած, առողջապահական տեսակետից միանգամայն վնասակար հոտը, վարակել օղը,

և, վերջապէս, եթէ մենք ուզում ենք մեր տներում ունենալ վաննաների, դուշերի յարմարութիւններ, որոնք ոչ միայն ամառը մեզ զովացնելու, այլ նոյն իսկ ձմեռնե-

ըլ նրանցով օգտւելու համար, նամակնաւանդ հիւանդութեանց դէպքելում, այն ժամանակ մենք ամենից առաջ պիտի մտածենք միայն և միմիայն առողջապահուան այդ երկու գլխաւոր գործոնների մասին.—

զրանցքի եւ կոյուղու մասին, կամ կոյուղու եւ զրանցքի մասին:

Եւ, քանի որ, ներկայում մեր ջրանցքն, այսպէս թէ այնպէս, հերթական և նոյն իսկ սախողական հարց է դարձել, ուստի մեր քաղաքին մնում է նոյնպիսի ոտիպողական-հերթական դարձնել և ոչ պակաս անհրաժեշտ կոյուղու շինութիւնը:

Քաղաքը, մեր կարծիքով, կարող է այդ անել միայն վերեւու յիշած եղանակով: Կը կնում ենք, առաջ քաղաքիս բնակչութեանը 3-4 թէք և զուգահեռական ուղղութեամբ, այսպէս ասած, զլխաւոր ճիւղեր և այդպիսով միջոց և հնարաւոր տիւն տալ քաղաքացիներիս ինքնաբերաբար հոգալ հորիզոնական գծերի կառուցման մասին՝ համաձայն Աւպավազից հաստատած մի որոշ տփաթ: Են այսպիս եւ այդ կարող է անել քաղաքը միայն այն ժամանակ, երբ միը առաջարկած „Սնհրաժեշտ ձեռնարկութիւնը“ իր բոլոր մասերով օրինական հիմքի վրայ կդնի և նրա իրադարձութիւն տալ քաղաքացիներիս ինքնաբերաբար հոգալ հորիզոնական գծերի կառուցման մասին՝ համաձայն Աւպավազից հաստատած:

Ա. Վ. Զ. ՀԱՅՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ  
Ա. Վ. Զ. ՀԱՅՐԱՅԻՆ ՊՈԾՈՎԱՅԻ ԲԱՆ  
7/7 1628  
Ա. Վ. ԱՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱ

11

«Ազգային գրադարան



NL0297381

25.495